

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



## ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս ..... 3
2. Ամփոփագիր ..... 4
3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ .....4
4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ .....4
5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ.....11

# 1. Ներածական մաս

## Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. մայիսի 11-ի թիվ 123-Ա որոշում:

## Հաշվեքննության օբյեկտը

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն

## Հաշվեքննության առարկան

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն

## Հաշվեքննության առարկայի չափանիշները

### Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. մարտի 31-ը ներառյալ:

### Հաշվեքննության կատարման ժամկետը

2021թ. մայիսի 19-ից մինչև 2021թ. հուլիսի 31-ը ներառյալ:

### Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն, իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցման, արտաքին հաստատման, վերլուծական, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգեր:

### Հաշվեքննությունն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագույանը:

## 2. Ամփոփագիր

Առկա է անհամապատասխանություն կազմակերպված գնման ընթացակարգերում՝ հրապարակման ենթակա փաստաթղթերի կազմման և հրապարակման պահանջների կատարման՝ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության հետ առնչվող պահանջներում:

## 3. Հաշվեքննության հիմնական արդյունքներ

Հաշվեքննության ընթացքում ստացվել են բավարար տեղեկատվություն հաշվեքննության իրականացման համար:

Էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն:

## 4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները

ՀՀ աշխատանքի ել սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության (այսուհետ՝ ՍԱԾ) ՀՀ 2021թ.-ի պետական բյուջեի տարեկան պլանը կազմել է 404,703,188.48 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը 427,404,231.68 հազ. դրամ: Երեք ամիսների պլանը կազմել է 101,927,518.45 հազ. դրամ, երեք ամիսների ճշտված պլանը՝ 122,015,837.65 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի համար փաստը 115,432,841.44 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 115,538,285.12 հազ. դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում փաստը կազմել է 93,660,766.06 հազ. դրամ, որը հաշվետու տարվա երեք ամիսների նկատմամբ 23.2%-ի չափով պակաս է եղել (Հավելված 1):

Նշանակալի հաշիվներ են ընտրվել 1068-12002 Երեխայի ծննդյան միանվագ նպաստ (2021 թ-ի 1-ին եռամսյակում 4,417,700.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1102-12001 Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների

կենսաթոշակներ (2021 թ-ի 1-ին եռամսյակում 7,744,713.19 հազ.դրամ փաստացի ծախս), 1102-12003 Աշխատանքային կենսաթոշակներ (2021 թ-ի 1-ին եռամսյակում 58,303,719.25 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12005 Աջակցություն զոհվածների ընտանիքներին (2021 թ-ի 1-ին եռամսյակում 1,420,300.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12010 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ միանվագ դրամական օգնություն Արցախում հաշվառված քաղաքացիներին (2021 թ-ի 1-ին եռամսյակում 6,854,103.59 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12011 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ միանվագ դրամական աջակցություն Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին (2021 թ-ի 1-ին եռամսյակում 6,198,900.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12016 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետությունում հաշվառված և հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին միանվագ դրամական աջակցություն (2021 թ-ի 1-ին եռամսյակում 1,319,000.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12021 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի վերահսկողության ներքո գտնվող համայնքների հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման եռամսյա սոցիալական աջակցության տրամադրում (2021 թ-ի 1-ին եռամսյակում 57,375.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12022 Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության տրամադրում (2021 թ-ի 1-ին եռամսյակում 461,790.0 հազ.դրամ փաստացի ծախս), 1205-12023 2020 թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողության հետևանքով վիրավորում ստացած զինծառայողներին սոցիալական աջակցության տրամադրում (2021 թ-ի 1-ին եռամսյակում 3,067,500.0 հազ.դրամ փաստացի ծախս) ծրագրերը: Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումները ներկայացված են ստորև:

## Ծրագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներ

Աղյուսակ 1

|            | Ծրագիր/միջոցառում  | Գումար,<br>հազ.դրամ |
|------------|--|---------------------|
| 1068       | Ժողովրդագրական վիճակի բարելավում   | 6,107,836.10        |
| 1068-11001 | Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրման ապահովում   | 2,452.70            |
| 1068-12001 | Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ   | 1,687,683.40        |
| 1068-12002 | Երեխայի ծննդյան միանվագ նպաստ  | 4,417,700.00        |
| 1102       | Կենսաթոշակային ապահովություն՝ այդ թվում  | 67,098,301.54       |
| 1102-11001 | Կենսաթոշակների և այլ դրամական վճարների տրամադրման տեղեկատվական միասնական համակարգերի սպասարկում և շահագործում                          | 0                   |
| 1102-11002 | Կենսաթոշակների և այլ դրամական վճարների իրականացման ապահովում   | 201,566.62          |
| 1102-11003 | Կենսաթոշակների ձևաթղթերի տպագրություն  | 0                   |
| 1102-12001 | Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ  | 7,744,713.19        |
| 1102-12002 | Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների զինվորական կենսաթոշակներ   | 142,324.74          |
| 1102-12003 | Աշխատանքային կենսաթոշակներ   | 58,303,719.25       |
| 1102-12004 | ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակներ   | 705,977.74          |
| 1205       | Սոցիալական ապահովություն՝ այդ թվում  | 27,070,743.95       |
| 1205-12001 | Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ  | 6,254,012.36        |
| 1205-12002 | Կենսաթոշակառուի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստ                 | 1,412,547.00        |
| 1205-12004 | Աջակցություն հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհվածների ընտանիքներին  | 24,500.00           |
| 1205-12005 | Աջակցություն զոհվածների ընտանիքներին   | 1,420,300.00        |
| 1205-12007 | ՀՀ ՊՆ, ՀՀ ԿԱ ԱԱԾ կրտսեր, միջին, ավագ և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության միջին, ավագ, գլխավոր սպայական անձնակազմին սոցիալական աջակցություն        | 716.00              |
| 1205-12010 | Ռազմական դրությամբ պայմանավորված միանվագ դրամական օգնություն Արցախում հաշվառված քաղաքացիներին  | 6,854,103.59        |
| 1205-12011 | Ռազմական դրությամբ պայմանավորված՝ աջակցություն Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին | 6,198,900.00        |
| 1205-12016 | Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն Արցախի Հանրապետությունում  | 1,319,000.00        |

|            |  |              |
|------------|--|--------------|
|            | հաշվառված եւ հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին   |              |
| 1205-12021 | Ռազմական դրությամբ պայմանավորված՝Արցախի վերահսկողության ներքո գտնվող համայնքների հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման եռամսյա սոցիալական աջակցության տրամադրում | 57,375.00    |
| 1205-12022 | Ռազմական դրությամբ պայմանավորված՝Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության տրամադրում                          | 461,790.00   |
| 1205-12023 | 2020 թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմ. գործող. հետեւանքով վիրավորում ստացած զինծառայողներին սոցիալական աջակցության տրամադրում   | 3,067,500.00 |

Ժողովրդագրական վիճակի բարելավում ծրագրի Երեխայի ծննդյան միանվագ նպաստ միջոցառման շրջանակում ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք է 4,951,572 հազ. դրամ տրամադրվեր 11,267 շահառուի: Երեք ամիսերի ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 4,417,700 հազ. դրամ 8,554 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 533,872 հազ. դրամ պակաս տրամադրելը ըստ Հավելված 2-ի պայմանավորված է փաստացի ծնվածների համապատասխան կարգաթվի որոշ տարբերությամբ, իսկ 2,713-ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած և փաստացի նորածինների կարգաթվերով ստացող նպաստառուների թվաքանակով:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ միջոցառման շրջանակում ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք է 34,440 շահառուի տրամադրվեր 8,315,610.11 հազ. դրամ գումար: Երեք ամսվա ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 7,744,713.19 հազ. դրամ գումար 31,053 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածում պլանավորվածից 570,896.92 հազ. դրամ պակաս տրամադրելը և 3387-ով շահառուների թվաքանակի նվազումը ըստ

Հավելված 2-ի պայմանավորված է իրավունք ձեռք բերած և փաստացի կենսաթոշակառուների թվաքանակի տարբերությունով:

Կենսաթոշակային ապահովություն ծրագրի շրջանակում աշխատանքային կենսաթոշակները ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 464,480 շահառուի՝ 59,536,082.9 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով: Երեք ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների փաստացի 431,025 շահառուի տրամադրվել է 58,303,719.25 հազ. դրամ գումար: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 1,232,363.65 հազ. դրամ պակաս տրամադրելը պայմանավորված է իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների հանրապետությունից բացակայելու հանգամանքով, իսկ 33,455 -ով շահառուների թվաքանակի նվազումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած և փաստացի կենսաթոշակառուների թվաքանակի տարբերությունով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Աջակցություն զոհվածների ընտանիքներին միջոցառման շրջանակում ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք է տրամադրվեր 1,740,000 հազ. դրամ: Երեք ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 1,420,300 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 319,700 հազ. դրամ պակաս տրամադրելը ըստ Հավելված 2-ի պայմանավորված է իջոցառման գծով ուժային կառույցներից ստացված փաստացի պահանջի հանգամանքով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված միանվագ դրամական օգնություն Արցախում հաշվառված քաղաքացիներին միջոցառման շրջանակում ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք է 8,051,708 հազ. դրամ տրամադրվեր 117,630 շահառուի: Երեք ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 6,854,103.59 հազ. դրամ 100,015 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 1,197,604.41 հազ. դրամ պակաս տրամադրելը և 17,615-ով շահառուների նվազեցումը ըստ Հավելված 2-ի պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:



Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված՝ աջակցություն Ադրբեյջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված քաղաքացիներին միջոցառման շրջանակում ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք է 6,329,250 հազ. դրամ տրամադրվեր 21,097 շահառուի: Երեք ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 6,198,900 հազ. դրամ 20,663 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 130,350 հազ. դրամ պակաս տրամադրելը և 434-ով շահառուների նվազեցումը ըստ Հավելված 2-ի պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցություն Արցախի Հանրապետությունում հաշվառված եւ հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին միջոցառման շրջանակում ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք 1,383,750 հազ. դրամ տրամադրվեր 5,535 շահառուի: Երեք ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 1,319,000 հազ. դրամ 5,276 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 64,750 հազ. դրամ պակաս տրամադրելը և 259-ով շահառուների նվազեցումը ըստ Հավելված 2-ի պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի վերահսկողության ներքո գտնվող համայնքների հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման եռամսյա սոցիալական աջակցության տրամադրում միջոցառման շրջանակում ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք 337,500 հազ. դրամ տրամադրվեր 3,000 շահառուի: Երեք ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 57,375 հազ. դրամ 1,898 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 280,125 հազ. դրամ պակաս տրամադրելը

և 1,102-ով շահառուների նվազեցումը ըստ Հավելված 2-ի պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

Սոցիալական ապահովություն ծրագրի Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության տրամադրում միջոցառման շրջանակում ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք 620,500 հազ. դրամ տրամադրվեր 18,629 շահառուի: Երեք ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 461,790 հազ. դրամ 14,632 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 158,710 հազ. դրամ պակաս տրամադրելը և 3,997-ով շահառուների նվազեցումը ըստ Հավելված 2-ի պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

Սոցիալական ապահովություն ծրագրի 2020 թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեյջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմ. գործող. հետեւանքով վիրավորում ստացած զինծառայողներին սոցիալական աջակցության տրամադրում միջոցառման շրջանակում ըստ առաջին երեք ամիսների ճշտված պլանի պետք 3,500,000 հազ. դրամ տրամադրվեր 7,000 շահառուի: Երեք ամիսների ընթացքում ըստ ոչ ֆինանսական ցուցանիշների տրամադրվել է 3,067,500 հազ. դրամ 6,135 շահառուի: Հաշվետու ժամանակահատվածի պլանավորվածից 432,500 հազ. դրամ պակաս տրամադրելը և 865-ով շահառուների նվազեցումը ըստ Հավելված 2-ի պայմանավորված է միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

Ռազմական դրությամբ պայմանավորված իրականացված միջոցառումների մասով անդրադարձ կկատարվի հետագա հաշվեքննությունների ընթացքում:

#### **Գնումների կազմակերպման գործընթացի վերաբերյալ**

Սոցիալական ապահովության ծառայության 2021 թվականի տարեսկզբին հաստատված գնումների պլանով նախատեսվել է 1,880,465.0 հազ. դրամ գումար: Սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն 2021թ. գնումների պլանից մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ կազմակերպված թվով 52 գնման ընթացակարգերի շրջանակներում կնքվել է թվով 70 պայմանագիր ընդհանուր 1,693,028.0 հազ. դրամ պայմանագրային արժեքով, որից գազի, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, բանկային, ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության կամ լիզինգի ծառայությունների համար կնքվել է թվով 31 պայմանագիր ընդհանուր 1,575,174.0 հազ. դրամ պայմանագրային արժեքով: Նշված պայմանագրերի շրջանակներում ներկայացված կատարողականներով մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ վճարվել է ընդհանուր 324,636.1 հազ. դրամ, որից գազի, էլեկտրականության և խմելու ջրի բաշխման, հանրային հեռախոսային, փոստային, բանկային, ոչ բնակելի անշարժ գույքի վարձակալության կամ լիզինգի ծառայությունների համար՝ 322,909.5 հազ. դրամ:

## 5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Կազմակերպված գնման ընթացակարգերում՝ հրապարակման ենթակա փաստաթղթերի կազմման և հրապարակման պահանջների կատարումը՝ գնումների ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուսումնասիրությունից պարզվեց, որ.

1. ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում.

1.1 Տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշման մեջ ընտրված մասնակցի մասին որոշումն ընդունվել է 29.12.20թ., իսկ պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարակվել է 08.01.21թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև

պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը, ուստի այն հրապարակվել է 1 աշխատանքային օր ուշացումով:

- 1.2 Գնահատող հանձնաժողովի 23.12.20թ. նիստում որոշվել է հայտի գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 25.12.20թ., որը չի հրապարակվել տեղեկագրում: ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 34-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով:

### ***Հաշվեքննության օբյեկտի բացառություն.***

ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-21/1 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի վերաբերյալ.

- 1.1 Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության ժամկետի ուշացումը տեխնիկական է՝ հայտարարությունն արձանագրության հետ միասին ոչ ավտոմատ ծանուցմամբ ուղարկվում է մասնակիցներին, դրանց հրապարակված չլինելը տեխնիկական վրիպակ է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:
- 1.2 Գնահատող հանձնաժողովի 25.12.2020 նիստի արձանագրության սկանավորված տարբերակները հայերեն և ռուսերեն լեզուներով առկա են, ուստի դրա հրապարակված չլինելը admin.gnumner, gnumner.am

համակարգերի խափանման հետևանք է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

Միաժամանակ հայտնում են, որ թիվ 3 արձանագրությամբ, մասնակիցները հրավիրվել են գների նվազեցման բանակցությունների, ինչով պայմանավորված վերջիններս ծանուցվել են առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների վերաբերյալ:

### **Հաշվեքննող խմբի արձագանքը.**

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընթացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

2. ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-21/4 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում.

- 2.1 Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 02.02.21թ., իսկ նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է 05.02.21թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում, ուստի այն հրապարակվել է 2 աշխատանքային օր ուշացումով:
- 2.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 2-րդ մասի պահանջներով սահմանված հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը տեղեկագրում հրապարակման ենթակա գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի կողմից ստորագրված շահերի

բախման բացակայության մասին հայտարարությունը չի հրապարակվել տեղեկագրում:

***Հաշվեքննության օբյեկտի բացառություն.***

- ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-21/4 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի վերաբերյալ.
- 2.1 Գնահատող հանձնաժողովի նիստի հրապարակման ժամկետի ուշացումը տեխնիկական է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

Հայտերը բացվելուց հետո armeps համակարգում յուրաքանչյուր անձ հնարավորություն ունի ստանալ ամբողջական տեղեկատվություն մասնակիցների և ներկայացրած գների վերաբերյալ:

- 2.2 շահերի բախման բացակայության մասին հայտարարության հայերեն և ռուսերեն լեզուներով տարբերակներն առկա են, ուստի դրանց հրապարակված չլինելը տեխնիկական վրիպակ է՝ admin.gnumner, gnumner.am համակարգերի խափանման հետևանք, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

***Հաշվեքննող խմբի արձագանքը.***

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընթացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

3. ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-21/5 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգում.

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը ռուսերեն լեզվով չի հրապարակվել տեղեկագրում ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 34-րդ կետի 1-ին մասի պահանջին համապատասխան:

***Հաշվեքննության օբյեկտի բացառություն.***

ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-21/5 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի վերաբերյալ Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը ռուսերեն լեզվով կազմված է, դրա հրապարակված չլինելը տեխնիկական վրիպակ է՝ admin.gnumner, gnumner.am համակարգերի խափանման հետևանք, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

#### ***Հաշվեքննող խմբի արձագանքը.***

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընթացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

4. ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում.

- 4.1 Գնահատող հանձնաժողովի 29.01.21թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն որոշվել է հայտի գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 02.02.21թ., սակայն տեղեկագրում կատարված հրապարակումների համաձայն գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության նիստը տեղի է ունեցել 04.02.21թ., ինչպես նաև թիվ 3 արձանագրության մեջ նշվել է, որ սահմանված ժամկետում Իքս-Արթ ՍՊԸ-ն, Մովսեսյան ՍՊԸ-ն, ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ ՍՊԸ-ն հանձնաժողովին են ներկայացրել հայտերով ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակները, սակայն թիվ 2 արձանագրության մեջ Իքս-Արթ ՍՊԸ և Մովսեսյան ՍՊԸ հայտերով ներկայացրած փաստաթղթերի անհամապատասխանության, ինչպես նաև շտկված տարբերակներ ներկայացնելու վերաբերյալ որոշում չի կայացվել: ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 34-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին

հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով, իսկ նույն կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

- 4.2 Գնահատող հանձնաժողովի 09.02.21թ. նիստում 3-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը, իսկ ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 34-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու,



կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ոուսերեն լեզվով, սակայն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայերեն և ոուսերեն լեզվով հայտարարությունները չեն հրապարակվել տեղեկագրում:

***Հաշվեքննության օբյեկտի բացառություն.***

- ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի վերաբերյալ.
- 4.1 Գնահատող հանձնաժողովի 02.02.2021 նիստի արձանագրության /արձանագրություն 2.1/ սկանավորված տարբերակները հայերեն և ոուսերեն լեզուներով առկա են, որտեղ արձանագրվել են անհամապատասխանություններ «Իքս-Արթ» ՍՊԸ-ի, «Մովսեսյան» ՍՊԸ-ի և «ԳԼԱՎՍՆԱԲ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի հայտերում և նիստը կասեցվել է: Մասնակիցները ծանուցվել են վերոգրյալի մասին և մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները: Արձանագրության հրապարակված չլինելը admin.gnumner, gnumner.am համակարգերի խափանման հետևանք է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:
- 4.2 3-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հայերեն և ոուսերեն լեզուներով կազմված է, հրապարակված չլինելը տեխնիկական վրիպակ է՝ admin.gnumner, gnumner.am համակարգերի խափանման հետևանք, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

***Հաշվեքննող խմբի արձագանքը.***

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

5. ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում.

- 5.1 Տեղեկագրում 09.03.21թ. հրապարակված կնքված պայմանագրի մասին հայտարարության մեջ նշվել է, որ 27.01.21թ. կատարվել է հրավերի պարզաբանման վերաբերյալ հարցում, որին պատասխանվել է 29.01.21թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, սակայն նշված հայտարարությունը չի հրապարակվել տեղեկագրում:
- 5.2 Գնահատող հանձնաժողովի 03.02.21թ. նիստում որոշվել է ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 05.02.21թ.: ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 34-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախարարակալորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը, սակայն գնահատող հանձնաժողովի 05.02.21թ. նիստ արձանագրության հայերեն տարբերակը չի հրապարակվել տեղեկագրում:
- 5.3 Գնահատող հանձնաժողովի 10.02.21թ. նիստում 13-րդ և 16-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած, սակայն գնման ընթացակարգը

չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվել է 04.03.21թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը, ուստի այն հրապարակվել է 15 աշխատանքային օր ուշացումով:

- 5.4 Ընտրված մասնակցների հետ պայմանագրերը կնքվել են 23.02.21թ., 01.03.21թ. և 03.03.21թ., իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 09.03.21թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը, ուստի այն հրապարակվել է 2 աշխատանքային օր ուշացումով:

#### **Հաշվեքննության օբյեկտի բացառություն.**

- ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/2 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի վերաբերյալ.
- 5.1 Հրապարակված կնքված պայմանագրի հայտարարության մեջ նշված է, որ կատարվել է հրավերի պարզաբանման վերաբերյալ հարցում, որի վերաբերյալ 29.01.2021 տրվել է պատասխան: «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 3-րդ կետի և հրավերի 3.3 կետի համապատասխան մասնակիցը գրավոր ծանուցվել է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում, ինչը արձանագրված է գնահատող հանձնաժողովի 29.01.2021 նիստում:
- 5.2 Գնահատող հանձնաժողովի 05.02.21թ. նիստը կասեցվել է՝ 13-րդ և 16-րդ չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու համար՝ առաջարկված գինը այդ գնումը կատարելու համար նախատեսված նախահաշվային գինը գերազանցելու հանգամանքով պայմանավորված: Մասնակիցը ծանուցվել է գների նվազեցման բանակցություններ վերաբերյալ,

արձանագրության չիրապարակելը վրիպակ է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

5.3 13-րդ, 16-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության հրապարակման ուշացումը տեխնիկական վրիպակ է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:

Միաժամանակ հարկ է նշել, որ նոր գնման գործընթաց տվյալ չափաբաժինների համար հնարավոր չէ սկսել, քանի դեռ կնքված չեն բոլոր պայմանագրերը և armeps համակարգում «ազատված» չեն տվյալ չափաբաժինները:

**Հաշվեքննող խմբի արձագանքը.**

Ընդունվել է ի գիտություն, սակայն գնումների գործընթացում հնարավոր գնման ընթացակարգի կամ դրա արդյունքի փոփոխման, ինչպես նաև շահագրգիռ կողմերից որևէ մեկի շահերի ոտնահարման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ հսկողություն սահմանել ընթացակարգային գործընթացի իրականացման նկատմամբ, իսկ գործընացը կազմակերպել գնումների ոլորտը կարգավորող իրավական նորմերի խիստ պահպանմամբ:

6. ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով կազմակերպված ընթացակարգում.

6.1 Գնահատող հանձնաժողովի 03.03.21թ. հայտերի գնահատման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է 05.03.21թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում, ուստի այն հրապարակվել է 1 աշխատանքային օր ուշացումով:

6.2 Գնահատող հանձնաժողովի 03.03.21թ. նիստում 9-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ և 19-րդ չափաբաժինները հայտարարվել են չկայացած, սակայն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը

տեղեկագրում հրապարակվել է 29.03.21թ.: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը, ուստի այն հրապարակվել է 16 աշխատանքային օր ուշացումով:

- 6.3 Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը ռուսերեն լեզվով չի հրապարակվել տեղեկագրում ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 34-րդ կետի 1-ին մասի պահանջին համապատասխան:

***Հաշվեքննության օբյեկտի բացառություն.***

ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի վերաբերյալ.

- 6.1 Գնահատող հանձնաժողովի 03.03.2021 նիստի արձանագրության 1 օր ուշ հրապարակելը տեխնիկական վրիպակի արդյունք է, ինչը չի հանգեցրել մասնակիցների շահերի ոտնահարմանը և չի ազդել գնման գործընթացի արդյունքների վրա:
